



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիս, 2021 թվականի № 43-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասով, 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, 42-րդ հոդվածի 6-րդ մասով և 67-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1964-Ա որոշման 3-րդ կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունվարի 13-ի N 3-Լ որոշման հիման վրա «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտված համարվելու փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունվարի 13-ի N 3-Լ որոշման հիման վրա Ընկերություն կողմից լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի:

2. Ընկերության կանոնադրությունում կատարել և հաստատել հետևյալ փոփոխությունները.
 - 2.1. Ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «4.1. «Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,474,859,781.87 (մեկ միլիարդ չորս հարյուր յոթանասունչորս միլիոն ութ հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր ութսունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) ՀՀ դրամ: Այն բաժանված է 3,941,473 (երեք միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր յոթանասուներեք) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 374.19 (երեք հարյուր յոթանասունչորս ամբողջ տասնինը հարյուրերորդական) ՀՀ դրամ անվանական արժեքով:»
3. Հանձնարարել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին՝ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշմամբ պայմանավորված փոփոխությունների պետական գրանցման նպատակով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

30 հունիս, 2021 թվականի

ք. Երևան